

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության 2015 թվականի առաջին կիսամյակում կատարված աշխատանքների մասին

2016-2018 թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրագրերի հետ կապված քննարկումներ ենք անցկացրել և կատարել համապատասխան ճշտումներ ՀՀ քաղաքաշինության և ՀՀ էներգետիկայի ու բնական պաշարների նախարարությունների հետ:

2015-2018 թթ. քաղաքաշինության բնագավառում քառամյա զարգացման ծրագրի հաստատման հետ կապված աշխատանքներ ենք տարել մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծությունների բաժնի ինչպես նաև ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության համապատասխան վարչությունների հետ:

Աշխատանքներ ենք տարել ՀՀ պետական բյուջեով իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերով իրականացվող օբյեկտների ընտրության, փաստաթղթերի հավաքագրման, համայնք-կազմակերպություն համագործակցության գործում:

Ներկայացրել ենք 260.0 մլն.դրամի շրջանակներում նախագծանախահաշվային փաստաթղթեր ունեցող օբյեկտների ցանկ, որպես համայնքների առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիր 2015թ-ին ՀՀ պետական բյուջեի պահուստային ֆոնդի միջոցներով իրականացնելու համար:

Ներկայացրել ենք 500,0 մլն. դրամի շրջանակներում մարզի համայնքների առաջնահերթ լուծում պահանջվող օբյեկտների ցանկ 2016 թվականի ՀՀ պետական բյուջեով իրականացնելու համար:

Խնձորուտ գյուղի դպրոցի շենքի հիմնանորոգման և «Կայուն սնունդ» ծրագրի իրականացման համար պատվիրվել է նախագծանախահաշվային փաստաթղթեր և համապատասխան գրությամբ ներկայացրել ենք ՀՀ քաղաքաշինության նախարարություն:

ՀՀ կառավարության 2014 թվականի օգոստոսի 7-ի N 834 - Ն որոշմամբ Զառիթափ համայնքի ոռոգման ջրագծի կառուցման համար նախատեսված 27640,00 հազ. դրամից 2014 թ-ին կատարվել է 11200.0 հազ. դրամի շին.մոնտաժային աշխատանքներ: Մնացորդային գումարը կազմում է 16440.0 հազ. դրամ: Համաձայն ՀՀ կառավարության 05.03.2015թ-ի N 198-Ա որոշման կատարվել է պայմանագրային

ժամկետի երկարացում, աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել 2015թ-ի մայիսի 20-ը : 2015թ-ի առաջին կիսամյակում կատարվել է 16440.0 հազ. դրամի շին.մոնտաժային աշխատանքներ: Ջրագիծը հանձնվել է շահագործման սահմանված ժամկետում:

Գյուղական համայնքների տնտեսական զարգացման ԾԻԳ պետական հիմնարկության միջոցներով մարզի Մալիշկա,Գետափ,Արփի Զատիթափ և Փոռ համայնքներում իրականացվում է գազիֆիկացման աշխատանքներ 565,0 մլն. դրամի: Առաջին կիսամյակում իրականացվել է 169.0 մլն. դրամի շին մոնտաժային աշխատանքներ : Նշված աշխատանքների կատարման համար համայնքների կողմից կատարվել է համաֆինանսավորում 51.5 մլն. դրամի դիմաց 17.97 մլն. դրամ:

Աշխատանքներ են տարվում ՀՄՆՀ-ի միջոցներով Զատիթափի մանկապարտեզի շենքի հիմնանորոգման ուղղությամբ: Այն նախնական հաշվարկներով կիրականացվի 165.0 մլն. դրամով:

«Գեոթիս» ՓԲԸ – ի միջոցներով իրականացվում է Գնդևազի մշակույթի տան հիմնանորոգումը 30.0 մլն. դրամ, Սարավան գյուղում ոռոգման ջրագծի կառուցում 80.0 մլն. դրամ: Աշխատանքներն ընթացքի մեջ են:

«Վիվա-Սել» ՄՏՍ-ի բարեգործությամբ իրականացվում է մարզի սահմանամերձ Խաչիկ գյուղում 3 առանձնատան կառուցման աշխատանքներ 10.5 մլն.դրամի և 2 առանձնատան հիմնանորոգում 2.0 մլն. դրամ:

«Ապավեն համայնքներին» ԲՀԿ-ի միջոցներով մարզի 8 համայնքներում, այդ թվում Ելփին, ՉԻՎԱ, Արենի, Խաչիկ, Արփի, Արտաբույնք, Հորբատեղ և Ագարակաձոր իրականացվում է փոքրածավալ շինարարական աշխատանքներ 31.377 մլն. դրամի, ներառյալ համայնքների կողմից կատարվող համաֆինանսավորումը:

Նախատեսվում է փոքրածավալ շինարարական աշխատանքներ իրականացնել նաև «ֆուլեր տնաշինական կենտրոն» ԲՀԿ –ի միջոցների հաշվին Արփի համայնքում մրզի սառնարան, Զատիթափ և Գնդևազ գյուղերում կաթի հավաքման կետ, Ռինդ, Չիվա և Ելփին գյուղերում ոռոգման ծրագրեր և Հորսում անասնախմոցների տեղադրման աշխատանքներ:

Ասիական զարգացման բանկի միջոցներով կատարվել է Զատիթափ համայնքի խմելու ջրի հիմնանորոգման աշխատանքները: ՕԿՁ-ի հիմնանորոգման աշխատանքները ընթացքի մեջ են :

Վերակառուցման զարգացման բանկի միջոցների հաշվին կառուցվել է կեղտաջրերի մաքրման կայան Ջերմուկ քաղաքում, որի արժեքը կազմել է 653988.0 հազ. դրամ: Ջերմուկ քաղաքում կոյուղագծի վերանորոգման աշխատանքները ընթացքի մեջ են, որի արժեքը կազմում է 664916.0 հազ. դրամ:

Ճարտարապետության բնագավառ

2015 թվականի առաջին կիսամյակում աշխատանքներ է տարվել մարզի բնակավայրերի պարզեցված գլխավոր հատակագծերի մշակման ուղղությամբ: Սարավան համայնքի նախագծային առաջադրանքը, Էլակետային նյութերի ցանկը և ավագանու որոշումը ուղղարկվել է ՀՀ քաղաքաշինության նախարարություն, իսկ Գնդևազ համայնքի պարզեցված գլխավոր հատակագծի պատվիրման համար պահանջվող փաստաթղթերը մշակման փուլում են:

2015թ. առաջին կիսամյակին հիմք ընդունելով ՀՀ փոխվարչապետը տարածքային կառավարման նախարարի 2013թ. դեկտեմբերի 19-ի N 12-ն և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2013թ. դեկտեմբերի 4-ի N 371-ն համատեղ հրամանը վարչական հսկողություն է իրականացվել մարզի 3 քաղաքներում և գյուղական համայնքներում, իսկ հունիսի առաջին շաբաթվա ընթացքում մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչությունում տեսչական ստուգումներ է իրականացվել ՀՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչության կողմից:

Քաղաքաշինության վարչությունը աջակցում և աշխատանքներ է տանում վարչական հսկողությամբ համայնքներում հայտնաբերված բացթողումները շտկելու և ՀՀ կառավարության որոշումներով նախատեսված գործառնությունները կատարելու ուղղությամբ:

Առաջին կիսամյակի ընթացքում գյուղական բնակավայրերում անհատական բնակելի տների կառուցման նպատակով տրվել է 6 հատ բազմակի օգտագործման համար նախատեսված բնակելի տների նախագիծ:

Նշված ժամանակահատվածում քաղաքաշինության պետական տեսչության Վայոց ձորի մարզային բաժնից ստացվել է թվոթ 6 ԱԿՏ, իսկ համայնքներից ստացվել է շինարարության 19-ը և քանդման 2 թույլտվություն:

Ուսումնասիրվել է թվով 16 մանկապարտեզների կողմից զբաղեցրած շինությունների տեխնիկական վիճակը և հայտնաբերված թերությունների ուսումնասիրության հետևանքով առաջարկվել է լուծումներ:

Ջրամատակարարման, ջրհեռացման և կոմունալ տնտեսության բնագավառ

2015թ-ի առաջին կիսամյակի ընթացքում շարունակվել է ՀՀ կառավարությանն առընթեր «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի հետ համագործակցությունը: Աշխատանքների շարունակությունը ապահովելու համար դիմել ենք համայնքի ղեկավարների և համաֆինանսավորման համար կայացնել համապատասխան որոշումներ, որը ներկայացվել է ՀՀԿԱ «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ» ՊՀ տնօրինությանը: Մարզի մի շարք համայնքներում (Գոմք, Հեր-Հեր, Մերս, Բարձրունի, Արենի, Ռինդ, Վերնաշեն, Գլաձոր, Ագարակաձոր, Ելփին, Արին, Ագատեկ) ՀՀԿԱ «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ» ՊՀ-ի ծրագրերով նախատեսվում է իրականացնել խմելու ջրի և ոռոգման համակարգերին հիմնանորոգման աշխատանքներ: Տարվել և տարվում են աշխատանքներ համայնքի ղեկավարների հետ համատեղ լուծելու համաֆինանսավորման 10% -ի խնդիրը:

Ուսումնասիրվել և քննարկվել է ՀՀ առողջապահության նախարարության կողմից 2014թ-ի երկրորդ կիսամյակում բնակչությանը տրվող խմելու ջրի որակի մոնիթորինգի արդյունքները: Առաջարկվել է համայնքի ղեկավարներին անկանխատեսելի հետևանքներից խուսափելու համար պայմանագրեր կնքել ՀՀ առողջապահության նախարարության հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն ՊՈԱԿ Վայոց ձորի մասնաճյուղի հետ:

2015թ. առաջին կիսամյակի ընթացքում մարզում բռնկումներ չեն արձանագրվել :

2015թ-ի առաջին կիսամյակում «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ Հարավային տարածքային մասնաճյուղի կողմից նախատեսված 95454.0 հազ. դրամից հավաքագրվել է 86803.52 հազ. դրամ, որը կազմում է 91%-ը :

2015թ. առաջին կիսամյակում շարունակվել է մարզի բնակավայրերի գազիֆիկացման ուղղությամբ տարվող աշխատանքները:

«Հայրուսգազարդ» ՓԲԸ-ի կողմից բաժանորդների թիվը ավելացել է 66-ով, որից 10 բազմաբնակարան շենքերի բնակարաններն են, իսկ 56 անհատական տներ:

Անվտանգության ապահովման համար տեղադրվել է 66 հատ անվտանգության համակարգ:

2015 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ստացվել է 345 դիմում բողոքներ և գրություններ, որոնք ուսումնասիրվել և պատասխանվել է ժամանակին:

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝

Ա.ՀՈՎՍԵՓՅԱՆ